ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.** Ժաննա Անդրեասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Բոստոն), սեպտեմբերի 21-30

4. **Հրավիրող կողմը.** Թուֆենկյան հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.* ընտանեկան բռնության ենթարկված անձանց և խոցելի ընտանիքներին աջակցության տրամադրման մոդելների և երեխաների պաշտպանությանն ուղղված ծառայությունների ուսումնասիրություն

6. **Քննարկված թեմաները.** Քննարկված թեմաներն էին ընտանեկան բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ ծառայությունների տրամադրումը, բռնության ականատես և բռնության ենթարկված երեխաներին ուղղված ծառայությունների տրամադրում, բռնություն գործադրած անձանց վերականգնողական ծառայություններ, ընտանիքների անապահովության գնահատման և աջակցության տրամադրման մոդելներ, կայուն եկամտի աղբյուրների ձևավորման ուղղված մոտեցումներ, պարենային բանկի գործառնություն, սոցիալական աշխատանք մասնագիտությամբ մասնագիտական կրթության կազմակերպում, Սփյուռքի կանանց հետ համագործակցության հնարավորություններ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** Կազմակերպվել են հանդիպումներ 14 կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, այդ թվում Բոստոնի ընտանիքներին անցումային աջակցության դեպարտամենտի, Քեմբրիջի ոստիկանության, բռնության ենթարկված զոհերին աջակցության տրամադրման զոհերի պետական

գրասենյակի, Բոստոնի համալսարանի Սոցիալական աշխատանքի դպրոցի, Հարավային Բոստոնի համայնքային առողջության կենտրոնի, ծառայություններ տրամադրող տարաբնույթ հասարակական կազմակերպությունների և այլ գերատեսչությունների հետ: Իրականացվել են այցեր պարենային բանկի երկու կետեր և ընտանեկան բռնության ենթարկված անձանց ապաստարան: Քննարկվել է հարցերի լայն շրջանակ՝ տրամադրվող ծառայությունների ֆինանսավորման մոդելների, աջակցության ձևերի, իրականացման առանձնահատկությունների, սոցիալական աշխատանքի կրթության կազմակերպման, քաղաքականության լրամշակման, բարձր ռիսկայնության դեպքերի շուրջ միջգերատեսչական համագործակցության և այլ հարցերի ընդգրկմամբ: Ձեռք են բերվել պայմանավորվածություններ անհրաժեշտության դեպքում հաղորդակցության շարունակման և հավելյալ տեղեկատվության ստացման մասով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Այցի ֆորմատը փաստաթղթերի ստորագրում կամ որոշման ընդունում չէր նախատեսում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Բոստոնի համալսարանի սոցիալական աշխատանքի դպրոցի սոցիալական քաղաքականության ամբիոնի հետ՝ համագործակցել սոցիալական աշխատողի ինստիտուտի զարգացման շրջանակներում՝ նախատեսելով աջակցություն կարողությունների զարգացման, կրթական բովանդակության բարելավման և այլ ուղղություններով, պայմանավորվածություն է ձեռք բերվել Բոստոնի հայ համայնքի ներկայացուցիչների հետ Սփյուռքի և Հայաստանի կանանց փոխադարձ հզորացման ծրագրի իրականացման վերաբերյալ՝ նախատեսելով տարբեր ոլորտներում Սփյուռքի և հայաստանաբնակ կանանց թեմատիկ ցանցերի ձևավորում և համատեղ միջոցառումների անցկացում՝ տարեկան կտրվածքով՝ տարին ամփոփելով ընդհանուր համաժողովով և շեշտադրելով մարզաբնակ կանանց ներգրավվածությունը, պայմանավորվածություններ են ձեռք բերվել նաև կոնկրետ ծրագրային առաջարկներ ներկայացնելու մասով՝ կապված բոստոնաբնակ հայազգի սոցիալական աշխատողների կողմից ՀՀ-ում գործող սոցիալական աշխատողների վերապատրաստման, կարողությունների հզորացման շուրջ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաներին ուղղված ծառայությունների զարգացման նպատակով համատեղ համաժողովի կազմակերպման շուրջ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.** Առաջարկվում է իրականացնել Կանայք Սփյուռքում և Հայաստանում" հզորացնելով միմյանց համագործակցության ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ձևավորել տարբեր ոլորտներում կանանց

համագործակցության թեմատիկ ցանցեր, ինչպես կանայք առողջապահության ոլորտում, կանայք կրթության և գիտության ոլորտում ևն՝ կազմակերպելով թեմատիկ միջոցառումներ և խթանելով համագործակցությունը, փոխադարձ ուսուցումը և հաջողված փորձի փոխանակումը ցանցերի ներսում, այնուհետև տարին եզրափակելով ամփոփիչ համաժողովով՝ ներկայացնելով թեմատիկ ցանցերի համագործակցության արդյունքները: Ակնկալվող արդյունքն է կանանց ներուժի առավել լիարժեք օգտագործումը Սփյուռքի և ՀՀ փոխհարաբերություններում, կանանց տեսանելիության բարձրացումն ու հզորացումը՝ փոխելով Սփյուռքի կարծրատիպային պատկերացումն իբրև նվիրատուի և ՀՀ պատկերացումն իբրև նվիրառուի և փոխհարաբերությունները վերածելով փոխշահավետ և փոխադարձ հզորացնող գործընթացի:

Առաջարկվում է նաև համագործակցության շրջանակ ձևավորել Բոստոնի համալսարանի հետ՝ սոցիալական աշխատանք մասնագիտությամբ կրթության որակի բարձրացման և սոցիալական աշխատողների վերապատրաստման ուղղություններով:

Առաջարկվում է առողջապահության նախարարության հետ քննարկել ընտանեկան բռնության ենթարկված անձանց ծառայությունները առողջության պահպանման առաջնային օղակի հաստատություններում տեղակայելու հնարավորությունը, որի գործառնությունը իբրև արդյունավետ մոդել տեսանելի էր դիտարկված ծառայությունների դեպքում, ինչպես Հարավային Բոստոնի համայնքային առողջության կենտրոնում, առաջարկվում է նաև արդարադատության նախարարության հետ քննարկել ընտանեկան բռնության դեպքերով բռնություն գործադրած անձանց ուղղված ռեաբիլիտացիոն ծառայությունները պրոբացիոն ծառայության ներքո իրականացնելու հնարավորությունը, որը նույնպես արդյունավետ մոդել է:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

03.10.2019թ.